



Հ. ԴԱՎԹՅԱՆ

## ԺԶ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՓԱՅՏԱԳԻՐ (ՔՍԻԼՈԳՐԱՖ) ԲՆԱԳՐԵՐՈՎ ՄԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ տպագրության գյուտից առաջ, նախքան շարժական տառերով գրքեր տպագրելը, գոյություն ուներ գրքերը բազմացնելու մի ավելի պարզ միջոց՝ փայտագրության եղանակը։ Բնագիրը փորագրվում էր համապատասխան շափի տախտակների վրա, ապա արտատպվում թղթի վրա։ Որևէ գրքից մի քանի օրինակ ձեռագիր ընդօրինակելուց շատ ավելի դյուրին էր այդ, քանի որ միևնույն տախտակից կարելի էր ստանալ տասնյակ օրինակներ։ Մեզ են հասել ԺԵ գարի առաջին կեսերում փայտագրությամբ տպված ավելի քան 30 անուն, գլխավորապես լատիներեն գրքեր։

Եվրոպայում տպագրության գյուտը շուտով դուրս մղեց գրատպության այդ ձեր։ Փայտագրությունը հարյուրամյակների կյանք ունեցավ միմիայն Զինաստանում, ուր այն սկիզբ էր առել Թղարից էլ առաջ և լայնորեն կիրառվում էր մինչև ԺԹ դարի առաջին քսանամյակը։ Ի վերջո, սակայն, այնտեղ ևս հիմնականում գործածությունից հանվեց<sup>1</sup>։

Գուտեմբերգի գյուտից հետո, փայտի վրա փորագրելու միջոցով էին արվում միայն գրքերում զետեղված պատկերները, գլխազարդերը, վերջնազարդերը և դրանց վրա հանդիպող մակագրությունները։

Կա՞ն արդյոք փայտագրությամբ տպագրված հայերեն գրքեր։

<sup>1</sup> Մեզ հասած շինարեն առաջին փայտափոր գիրքը 868 թվականն է կրում, իսկ շարժական տառերով շինարեն առաջին գիրքը տպագրվել է 1819 թվականին.



1596 թվականին Փարիզում տպված հայերեն փայտագիր բնագրերով լատիներեն գրքի մնանաթերթը

# ազաւթք կիրակետ

Հայրմեր որ յէրկինսղեւ մէ եղցի անունքո  
հկեցէ արքայու մէ քո եղցի կամք քո ։  
ոպ յէրկինս և յէրկրի զհաց մեր հանազորդ  
տուր մեզայսաւր և թողմեր զպարտամեր  
որպէս և մէք ըողումք մերոց պարտաւան  
աց ։ և մի տարի զմեզ իփորձու մէ ։ այլ ժրկեա  
շեղ ի չարէ ։ զի քոէ արքայու մէ զօրոք ։  
և փառք յաւիտեանս յաւիտ էնից ամեն :

1596 թվականին Փարիզում տպված գրքի 78-րդ էջի հայերեն փայտագիր «Հայր մեր»-ը

Անցյալում կարծիքներ են հայտնվել, թե 1512—1513 թվականներին Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերը ոչ թե շարժական տառերով, այլ փայտագիր են եղել, Սակայն հետագայում այդ կարծիքը հիմնովին հերքվեց<sup>2</sup>: Ենթադրվում է նաև, որ 1567 թվականին Արքար Դարի տպագրություն համարվող «Փոքր քերականութիւն»-ը տպվել է փայտափոր տպատակների միջոցով, կնքագիր (կնիքներ փորող—Հ. Դ.) ։ Հոթորի ձեռքով, դեռևս Արքարի Կոստանդնուպոլիս գալուց առաջ<sup>3</sup>, Արև ենթադրության օգտին խոսող փաստերից մեկն էլ այն է, թե այդ գրքից այնքան քիչ է տպվել, որ մինչև օրս որևէ օրինակ չի գտնված: Քանի որ գիրքը հայտնաբերված չէ, առայժմ անհնար է հաստատ խոսք ասել Ուրեմն, մինչև այժմ հայերեն փայտագիր որևէ գիրք կամ առանձին հատված հայտնի չէր: Վերջերս մեր ձեռքն ընկավ երևանի պե-

<sup>2</sup> Այդ առթիվ տե՛ս Գ. Ալենյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 46—48:

<sup>3</sup> Ա. Աղպօյանեան, «Տպագրության արվեստ և հայք», «Արորու», 1913, գիրք Ա, էջ 38:

տական համբային գրադարանի եվրոպական հնատիպ ֆոնդերում պահպող թօջ դարի լատիներեն մի հրատարակություն, որն ուշագրավ է թե՛ իբրև հայոց լեզվին նվիրված, հայագիտական ուսումնասիրություն և թե՛ նրա մեջ եղած հայերեն փայտագիր բնագրերով: Հրատարակվել է 1596 թվականին, Փարիզում, և կոչվում է «Paradigmata de quatuor linguis orientalibus praecipuis» («Նմուշներ արևելյան լորս հիմնական լեզվներից») (նկար 1):

Ինչպես երևում է անվանաթերթից, գիրքը նվիրված է հնագույն չորս լեզվուների՝ արաբերենի, հայերենի, արամեական լեզվի (սիրիական) և եթովպերենի ուսումնասիրությանը: 196 էջանոց այս գրքում հայերենին հատկացված է բավականին մեծ տեղ: Բացի նրանից, որ սկզբում այլ լեզվուների հետ խոսվում է նաև հայերենի մասին, ամբողջովին հայերենին է նվիրված 67 էջ (59—126 էջերը):

Ահա այս աշխատության սկզբի 8-րդ հՀամարակալված էջում զետեղված է «Rhythmus Armenicus» վերնագրով մի հայերեն ուսանակոր, իսկ 78-րդ էջում՝ «Հայոց մեր»-ը (նկար 2):

Հիշյալ երկու բնագրերն էլ ոչ թե շարված են շարժական տառերով, այլ փորագրություններ են, այսինքն տպված են փորագիր տախտակների միջոցով։ Այդ հաստատվում է հիտեյալ երկու հիմնական հատկանիշերով։

ա. Ուշադիր զննելիս անմիջապես նկատվում է, որ նույնանուն տառերը նույնանման չեն։ Մինչդեռ շարժական տառերով տպագրություններում, օրինակ, միևնույն գլխագրերը կամ բոլորագրերը անպայման նման են միշտանց։

բ. Նույն տառատեսակին (գարնիտուր) պատկանող տպագրական տառերը իրենց լայնքով, բարձրությամբ համաշափ են, այլապես տպագրություն չի ստացվի, իսկ ներկա դեպքում որոշ տառերը բարձր են, մյուսները ունեն ծեռագրանման երկար պոչեր և այլն։

Ուշագրավ է գրքի սկզբում բերված միջնադարյան տպերում նմանողությամբ (իմիտացիա) կառուցված հիտեյալ ոտանավորը։

Ա[ստուա]ծ դթած և ողորմած ունկն զնէ  
իւր ծառային։

Ով հաւատայ ուղիղ սրտիւ նայ կատարէ  
զիւր խնդրելին։

Դվ որ խնդրէ որ տեսանէ և զիտանայ  
զրանքն իրային։

Արուեստ առնէ զգիրքն ա[ստուա]ծ[ա]լին  
և զունկն զնէ վարդ[ա]լի[ետ] լին։

Թէպէտ քանքն աստունվորիս ո[ր] լա[էս]  
երազը կու անցանին։

Այլ ոչ պիտու է ի քոն լինել այլ պիտու է  
զիրան երազին։

Կամեցեալ բան մի ասել թէպէտ սիրելիքն իմ լսէին.  
իմաստութիւն ] հայելին հային թէ ինչ գեղեցիկ պատկերը տեսանին.  
Ով թումաճան մտացդ դուռն ի բաց արայ որ [ի]մաստութիւն ] ը մտանին.  
Որ սրտին դուռն [ի]մաստութիւն եամլը ի բաց անէ ամէն մարդ զինը հաւանին։

Թէ սույն ոտանավորում հիշատակվող թումաճանը ո'վ է և ինչ մասնակցություն է ունեցել գրքի հայերեն բաժինների հեղինակման հարցում, առայժմ հայտնի չէ։ Ակներեն է մի բան, որ Փարիզի առաջին հայերեն հրատարակությունը ոչ թե 1633 թվականին լույս տեսած Ֆրանցիսկո Ռիվոլայի «Բառագիրը Հայոց» Խորագրով հայ-լատիներեն բառարանն է, ինչպես համարվել է մինչև այժմ, այլ դրանից մոտ չորս տասնամյակ առաջ տպագրված սույն լեզվաբանական աշխատությունը։

Այսպիսով, մեր մատենագիտության մեջ հայտնի մինչև 1596 թվականը լույս տեսած օտարալեզու, բայց հայերեն բնագրերով չորս գրքերի՝ կողքին ավելանում է ևս մեկը՝ հայագիտության և հայ տպագրության պատմության համար արժեքավոր այս «Նմուշներ»-ը։

<sup>4</sup> Այդ գրքերի նկարագրությունները տե՛ս 1963 թվականին երեանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի հրատարակած «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ի 6, 7, 17 և 19 համարների տակ։

